առաջին ոգնականն էր յեղել հակառակորդների ապըստամբության ժամանակ, ապա Գեորգիի մահվանից հետո միայն († 1184), Թամարի յերկրորդ տարին, Սարգիս Զաքարյանը Հայոց և Վրաց ամիր սպասալար նշանակվեց, իսկ վորդիքը բարձր պաշտոններ ստացան պալատում, հայրենիք ստանալով նաև Լոռին *: Սարգիս վախճանվեց 1187 թվին և թաղվեց Սանահնի վանքում **: Զաքարյանների այս բարձրացումը հետևվանք էր վոչ միայն Սարգսի Գեորգիին ցույց տված աջակցության, այլ նաև նորա յերկու վորդոց հավատարիմ պաշտպանության Թամար թագուհուն: Վրաց թագավորությունը բռնված էր ներքին խռովությամբ 1186/7 թվերին. ժամանակակից Գոշ Մխիթարը հետևյալ տեղեկությունն է հաղորդում այդ մասին. «Եւ



Զաքարե յեվ Իվանե յեղբայրները, Հառիճում.
Պատկեր 1.

թագավորութիւնն Վրաց շփոթեալ կայր. զի Թամարն դուստր Գէորգեայ թագաւորի եթող զայրն առաջին յԱլանաց թագաւորութենէն, ի մայրենի ընտանութենէ իւրմէ Սաւլան անուն, որ և Դաւիթ ի թագաւորելն անուանեցաւ ***: Վրաց իշխանները միացած ռուս իշխանի հետ, արշավեցին թագուհու դեմ. Զաքարյան յեղբայրների հավատարիմ պաշտպանության շնորհիվ միայն ընկճվեց ապստամբությունը: Վրաց պատմագրի համեմատ Սարգսին վորպես յաջորդ՝ սպասալար նշանակվեց վոչ Զաքարիան, այլ Կամրադել, վոր Գեորգի Գ-ի աջակիցն էր ապստամբների դեմ. յեթե ճիշտ է այս տեղեկությունը, ապա Զաքարիայի սպասալարությունը պետք է 1193 թվից հետո դնել. վորովհետև

* Brosset. Hist. 409.—Elle *(Թամարը)* désigna pour généralisme Sargis Mechargrdzel, homme de haute famille et exprémenté dans la guerre, héros distingué, auquel elle donna Loré pour apanage, comme thawad avec de mthavar du Somkheth.

** *Արձանագ. Սանահնի. համ. Զալալյան. Ա. 28. Ազգ. Հանդես. գիրք Գ. յեր. 304. և* VII *և* VIII*. յեր. 391. Վիմական Տարեգիր 36:*

*** *Ձեռ. Եջմ. № 163/2606, 233բ:*

մինչ այդ կենդանի էր Կամրադելը և պատերազմների մեջ նորան գործակից եյին Զաքարյան Սարգսի և Վահրամի վորդիքը[1]: Սակայն Զաքարիայի ամիր սպասալարության մասին հայ արձանագրությունների մեջ յիշատակություն ունինք ավելի վաղ, այն է 1187 և 1191 թվականներից[2], միայն առանց «հայոց և վրաց» ընորոշումների. հավանական է, վոր Զաքարիա ամիր սպասալար էր մինչև Գամրակելի մահը միայն հայ զորքի համար, իսկ այնուհետև յերկու ազգերի: Իվանեն նշանակվում է պալատական զորքերի հրամանատար:

Յերկու յեղբայրները Թամարի թագավորության զարդն են կազմում. մանավանդ Զաքարիան յուր հանճարեղ զորապետությամբ կարողացավ վերջնականապես խորտակել մահմեդական լուծը Հայաստանում: Վրաց անվանական գերիշխանության տակ Հայաստանի մեծագույն մասն ընկավ յերկու յեղբայրների ձեռքը. հայ պատմիչները՝ Գանձակեցին, Վարդան, Օրբելյան, Մխիթար Այրիվանեցին, ինչպես և Վրաց պատմիչը, տալիս են իշխանների հաղթական պատերազմների նկարագրությունն ու նվաճված յերկիրների ցանկը՝ Շաքիի և Արցախի նահանգներից մինչև ներքին Բասեն և Բարկուշատից մինչև Լոռի *, կամ ըստ Օրբելյանի «ի Բարկուշատայ մինչ ի Մժնկերտ»: Վարդան տալիս է նաև գլխավոր կեդրոնների նուաճման թվականները. 1191 թվին գրավում յեն Շիրակը, 1196 թվին Անբերդը **, 1199 թ. Անին, 1201 թվին Բջնին, 1203 թվին Դվինը, 1206 թ. Կարսը: Խլաթն ազատվեց նվաճվելուց միայն պատահական անհաջողու-

1 Brosset. Histoire 410. 426. 429.

2 *Զալալյան. Ա. 98. 18. Սանահնի արձանագրությունը ստուգել ենք և գրի առել անձամբ: Ազգ. Հանդես* III. *283. Վիմական Տարեգիր 36. 37:*

* *Գանձակեցի 154. Վարդան 181. Այրիվանեցի 64. Օրբելյան. 391.* Brosset. Histoire. 466. 467. *Վրաց Պատմագիրը Կարսի առումը նշանակում է Թամարի թագավորության 23 կամ 24-րդ տարին, վոր համապատասխան է 1206/7 Փրկչ. թվին: Իրողության ավելի մոտ է առաջինը, վոր համապատասխան է Վարդանի տված Հայոց 655 թվականին. նույն թվին (ՈԾԵ) է նշանակում և Օրբելյան յուր նորագյուտ ժամանակագրության մեջ, վոր առել է հավանորեն Վարդանից: Այս ժամանակագրությունը դեռ ևս անտիպ է. օգտվել յենք հ. Ակինյանի Յերևանի թանգարանում կատարած արտագրությունից:*

** *Զաքարիան կանգնել է 1200 թ. ի հիշատակ Անբերդի առման մի խաչքար՝ հուշարձան, վոր այժմ գտնվում է Ինաքլու (պատկ. 2. առանց պատվանդանի) գյուղի նորաշեն եկեղեցում. Անբերդի՞ց է բերված, թե հենց այս գյուղն է սկզբնական տեղը, ասել չենք կարող: Խաչքարի ձախ կողմից (նայողի) վերին մասում փոքր ինչ կոտրված է և մի ուրիշ կտորով կարկատած: Խաչքարի արձանագրությունն է. Ի ՈԽԹ թուական/ութինս ես Զաքար/ե ամիր սպասալար Հա/յոց և*